## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

# Ո Ր Ո Շ Ու Մ

27 սեպտեմբերի 2018 թվականի N 61

## *ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 9 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

### *ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝*

Կողմ – 7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ

3. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ

4. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ

5. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6.ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ

7. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝* Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

*2018 թվականի սեպտեմբերի 27*

*գ. Արշալույս*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզի Արշալույս*
*համայնքի ավագանու*
*2018 թվականի սեպտեմբերի 27-ի*
*թիվ 61 որոշման*

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:

Զեկ. Ա. Առաքելյան

2. Գումար հատկացնելու մասին:

Զեկ. Կ. Սիմոնյան

3. Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 71 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Զեկ. Կ. Սիմոնյան

4. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի նշանակության այլ հողը աճուրդային կարգով օտարելու մասին:

Զեկ. Կ. Սիմոնյան

5.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում կատարելու մասին:

Զեկ. Կ. Սիմոնյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Առաքելյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 սեպտեմբերի 2018 թվականի N 62

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզի զինվորական կոմիսարի ՊԺԿ փոխգնդապետ Ռ. Սարգսյանի և Էջմիածնի ավտոդպրոցի փոխտնօրեն Է. Մկրտչյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի բնակիչներ զինակոչիկներ Սամվել Հարությունի Սարգսյանի և Ռոման Ջիվանի Խալիլյանին ավտոդպրոց սովորելու համար Արշալույս-Էջմիածին-Արշալույս 87 օր երթևեկության նպատակով հատկացնել յուրաքանչյուրին 17400 /տասնյոթ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ գումար:
2. 2018 թվականի հոկտեմբերի 5-ին ուսուցչի միջազգային օրվա առթիվ համայնքի միջնակարգ դպրոցի, նախակրթարանի, արվեստի դպրոցի, մանկապարտեզի 85 աշխատակիցների համար հյուրասիրություն կազմակերպելու և թվով 61 ուսուցիչներին, դաստիարակներին, խմբավարներին ծաղիկներ նվիրելու նպատակով հատկացնել 390000 /երեք հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ գումար:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի գործունեությունն ավելի թափանցիկ և հրապարակային դարձնելու, ինչպես նաև լայնորեն լուսաբանելու նպատակով որևէ լրատվական գործակալության հետ կնքել պայմանագիր և հատկացնել 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ գումար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ - 7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
3. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
4. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6.ԾԱՀՐԱՋՅԱՆ ԱՇՈՏ

7. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Կ.ՍԻՄՈՆՅԱՆ

*2018 թվականի սեպտեմբերի 27*

*գ. Արշալույս*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2018 թվականի N 63 -Ն

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով.

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի <<Համայնքի 2018 թվականի բյուջեի հաստատման մասին>> թիվ 71-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

01.1.1 խումբ ենթախմբի 5112 հոդվածը պակասեցնել 70.6 հազար դրամով
01.6.1 խումբ ենթախմբի 5122 հոդվածը պակասեցնել 190.9 հազար դրամով
01.6.1 խումբ ենթախմբի 4269 հոդվածն ավելացնել 180.0 հազար դրամով
08.3.1 խումբ ենթախմբի 4239 հոդվածն ավելացնել 300.0 հազար դրամով
08.2.4 խումբ ենթախմբի 4239 հոդվածը պակասեցնել 1080.0 հազար դրամով
09.1.1 խումբ ենթախմբի 4511 հոդվածն ավելացնել 600.0 հազար դրամով
09.1.1 խումբ ենթախմբի 5122 հոդվածն ավելացնել 131.5 հազար դրամով
09.5.1 խումբ ենթախմբի 5122 հոդվածն ավելացնել 130.0 հազար դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝*

Կողմ - 8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ

3. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ

4.ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ

5. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6.ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ

7.ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ                    Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

2018 թվականի սեպտեմբերի 27

գ. Արշալույս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-34

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 սեպտեմբերի 2018թվականի N 64-Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հրապարակային սակարկությունների մասին օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին>>N 1850-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի սեփականություն հանդիսացող 35 փողոցի 14 հասցեում գտնվող 04-021-0098-0004 կադաստրային ծածկագրով 5076 քմ բնակավայրի նշանակության այլ հողը օտարել աճուրդային կարգով:

2. Օտարման մեկնարկային գինը սահմանել 1 ք/մ կադաստրային արժեքը 1242 դրամ, ընդամենը՝ 6304392 /վեց միլիոն երեք հարյուր չորս հազար երեք հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ:

3. Հողատարածքի յուրաքանչյուր լոտի համար յուրաքանչյուր քայլը սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

### ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ

3. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ

4. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ

5. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ

7. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

*2018 թվականի սեպտեմբերի 27*

*գ. Արշալույս*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 սեպտեմբերի 2018 թվականի N 65

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով, հիմք ընդունելով Արշալույս համայնքի բնակիչ Աղավնի Մանուկյանի 2018 թվականի սեպտեմբերի 25-ի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկություն.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի բնակավայրին հարակից տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու և թվով 3 վկայական ստանալու համար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ – 7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

2. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ

3. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ

4. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ

5. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6.ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ

7. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

*2018 թվականի սեպտեմբերի 27*
*գ. Արշալույս*